

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ, Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1971, 162 էջ, գինը՝ 50 կոպ.

1965 թվականին «Սովետական դպրոցի» յոթերորդ համարում տպագրվեց Ռ. Իշխանյանի մի հոդվածը, ուր կասկածի տակ էր դրվում հարյուրավոր տարիների հայ քերականական գիտության մեջ արմատացած սեռական և հայացական հոլովների գոյությունը և առաջարկվում դրանք հանել հայերենի հոլովական հարացույցից և քերականությունից: Այդ հոդվածից վեց տարի հետո Իշխանյանը հրապարակեց սույն գրքույկը, որում տքնում է տեսական բազա ստեղծել 1965 թ. իր նշված առաջարկի համար:

Հեղինակը գրում է. «Պահպանողականություն սիրում է ուղղագրությունը, որ հաճախ մի ազգի հին և նոր դպրության միջև կամուրջի դեր է կատարում... և հազիվ թե հնարավոր լինի այսօր որևէ կերպ արդարացնել հայերենի դասական ուղղագրության մեծումն ու նոր ուղղագրության հաստատումը (էջ 7, ընդգծումն իմն է—Ա. Ղ.): Ի՞նչ է դա. մի նոր հերոստրատյան փորձ, թե անկեղծ կոչ՝ վերադառնալ դեպի դասական ուղղագրությունը: Սովետական հայ ժողովուրդը ապրել է երկու ուղղագրական ճգնաժամեր և դուրս է եկել իր գրի մշակույթով զորացած. այժմ նոր ճգնաժամ ստեղծելն ի՞նչ նպատակ ունի: Միայն մեր և գրաբարագիր գրականության միջև կամուրջ գցելու: Մեր գրագետ ժողովրդի համար այդ կամուրջի պետքը չկա, որովհետև մեր ուղղագրությամբ գրագետ հայը միշտ կարող է առանց դժվարության ընտելանալ այն տարբերությանը, որ կա մեր և գրաբարի ուղղագրության միջև: Ռ. Իշխանյանի մտայնությունը չի գալիս մեր արդի կուլտուրայի զարգացման հոգսից. նա ուղում է ոչնչից կամ շատ պարզ հարցերից պրոբլեմ ստեղծել և ապա դրա միջոցով խառնաշփոթություն առաջ բերել գիտության անդաստանում: Շարունակելով հետամտել իր նպատակներին՝ Ռ. Իշխանյանը գրում է. «Այլ է քերականագիտությունը, որը պետք է միշտ նորոգվի և միշտ հնարավորին չափ ճիշտ արտացոլի լեզվի կառուցվածքի տվյալ ժամանակվա վիճակը... Ըստ երե-

վույթին ժամանակակից հայոց լեզվի քերականագիտության հետագա նպատակներից մեկը պետք է լինի լեզվի կառուցվածքի նկարագրության ավելի ու ավելի ճշտումը, հստակեցումը, այսինքն՝ ձգտումն այն բանի, որ լեզվում եղած իրական երևույթները առավելագույն ճշտությամբ նկարագրվեն: Եվ այդ ճշգրտությունը, նկարագրման հստակությունը պետք է օգտագործվի հայերենի դասագրքերում: Քերականագիտությունը պետք է շրջափակվի ավանդականությանը» (էջ 6—7):

Ամենից առաջ՝ ի՞նչ երաշխիք կա, որ «ճշգրտողը» ճիշտ է ճշգրտում և ոչ թե կամայականություն ցուցաբերում կամ սխալ դիրքերից ելնելով՝ թյուր պատկերացում ըստեղծում, խեղաթյուրում այն, ինչ որ ճիշտ է, ինչպես կտեսնենք իր՝ Ռ. Իշխանյանի օրինակի վրա: Գրքույկի առաջաբանից իմանում ենք, որ Ռ. Իշխանյանի կողմից «...նկատի է առնված և օգտագործված... ամբողջ հին ու նոր գրականությունը» այդ թվում և իր «... անմիջական բազմահմուտ ուսուցչապետների... ուսումնասիրություններն ու դասախոսությունները... ժամանակակից մյուս լեզվաբանների հաճախ շատ արժեքավոր աշխատությունները» (էջ 4—5): Իսկ «լեզվական իրողությունը նրկարագրելու բնագավառում,— ասում է Ռ. Իշխանյանը,— մեր մոտեցումները հստակեցնելիս, թերևս ամենից ավելի օգտակար են եղել Գ. Զահուկյանի աշխատությունները և բանավոր ելույթները: Օգտակար են եղել նաև մի շարք այլազգի լեզվաբանների ուսումնասիրությունները, ամենից ավելի երևի Լ. Բլումֆիլդի» (էջ 5): Ինչպես տեսնում ենք, Ռ. Իշխանյանի կարևոր աղբյուրներից մեկը ոչ մարքսիստ լեզվաբան Լ. Բլումֆիլդի ուսումնասիրություններն են: Հենց դա էլ տարել է Իշխանյանին անխուսափելի անկման: «... Մեր նկարագրությունների ժամանակ աշխատել ենք նախ գտնել լեզվական օրինաչափությունների արտահայտությունները, նրանց համակարգը՝ միշտ նկատի ունենալով արտահայտածը, այսինքն՝ բովանդակությունը» (էջ 9), «ջանացել ենք չշփոթել լեզվի հնչույթային, ձևային»

ջին, բառային, ձևաբանական, շարահյուսական և խոսքային մակարդակները» (էջ 9),— հավաստում է հեղինակը:

Բայց «Քերականական տարբեր կարգերի նկարագրության դեպքում տարբեր չափով է հնարավոր լինում գերազանցապես մնալ լեզվական մակարդակներից միայն մեկում» (էջ 9),— գանգատվում է նա:

Իսկ ի՞նչ հարկ կա մնալ մեկ մակարդակում, ո՞վ է ստիպում Ռ. Իշխանյանին անսլայման այդպես վարվել: Մի մակարդակի երեւելային իմաստ են ստանում և հիմնավորվում միշտ մի այլ մակարդակի օգնությամբ: Օրինակ՝ ոչնչով չի կարելի հաստատել, թե հայերենն ունի դ, տ, թ հնչյունները, եթե մենանք նշույթի մակարդակում, բայց բառական մակարդակը տալիս է դուռ, տուն, քուր օրինակները, որով հաստատվում է այդ հնչյունների առկայությունը հայերենում: Իշխանյանը գրում է, որ «...հոլովների հարացույցը որոշելիս հնարավոր է մինչև վերջ մնալ ձևաբանական մակարդակում և հարացույցը լիովին ունենալուց հետո միայն ցույց տալ նրա «իրացումը» շարահյուսական մակարդակում» (էջ 9—10): Մխրճվելով ֆորմալիզմի մեջ, Իշխանյանը առանց ոտքը դուրս գցելու այդ մակարդակից որոշում է օրինաչափություններ, հոլովների կարգ, ուստի և դրանից ստացվում է միայն սխալաստիկա:

Մատերիալիստական դիալեկտիկան երեւելայինները քննելիս չի պահանջում մնալ միմիայն մի մոգական շրջանակում, այլ լայն ու բազմակողմանի մոտեցումներ ունենալ, առնել բովանդակությունն ու ձևը միասնաբար և անքակտելի: Իսկ Ռ. Իշխանյանին հակառակն է սովորեցնում Բլումֆիլդն իր ուսումնասիրություններով: Զի կարելի նստել մի ծառի և որոշել երկրադնդի չափերն ու ծավալը, չի կարելի ներփակվել մի շրջանակի մեջ և քննել աշխարհի անցուղարձը: Ռ. Իշխանյանը նրստել է իր մոդական շրջանակի մեջ՝ իր ձևաբանական մակարդակում և որոշում է, թե «...ըստ չ-րդ ձևափոխության ամենաշատն ունենում ենք 4 ձևափոխություններ, որոնք ուղիղ ձևի հետ տալիս են առավելագույնը 5 ձև (որոշ դոյականներ ավելի պակաս), ինչպես՝ ջրեր, ջրերից, ջրերով, ջրերում, ջրերի...» (էջ 25): Ուր մնացին, ապա, իմաստները, որոնք Իշխանյանի մտքում, ըստ իր հայտարարության, միշտ առկա են: Երանք պահվում են, որպեսզի հետո միայն հրահանգ ստանան. «Դնացե՛ք, կպե՛ք ձեր ձևերին»: Դա ձևի և բովանդակության անօրինակ խզում է և չի կարող գիտական մոտեցում համարվել:

Հոլովաձևն անկախ գոյություն չունի, նա գոյություն ունի միայն շարահյուսության մեջ, միայն նախադասության մեջ՝ իբրև իմաստ ունեցող և պաշտոն կատարող բառաձև, որից և պայմանականորեն առանձնացվում է հարացույց կազմելու համար:

Եթե հոլովն առանձին ձևով արտահայտված չէ, ապա նա փոխարինվում է իր իմաստն արտահայտող կապով և որևէ այլ հոլովով և ինքը վերանում: Օրինակ՝ հայերեն լեզվի մեջ կան բալում և բալի սեղ հավասարազոր արտահայտությունները: Առաջինը հոլով է՝ ներգոյական, իսկ երկրորդը հոլով չէ. փոխարինված է սեռականի ձևով և մեջ կատարությամբ: Եթե մեզ մոտ բոլոր դոյականներն այդ վերջին վիճակում լինեին, մենք ներգոյական հոլով չէինք ունենա, ինչպես արևմտահայերը, որտեղ հոլովի իմաստ կա, բայց հոլովը չկա, որովհետև նրա իմաստն արտահայտված է այլ եղանակով: Այդպես է նաև անգլերենում. սեռական boys book (սղայի գիրքը) ձևը հաճախ փոխարինվում է book of boy կապակցությամբ, այսինքն՝ օլ նախդիրով և բառի ուղղական ձևով: Երբ այդ պրոցեսն ընդգրկի բոլոր անուններն առանց բացառության, ապա անգլերենն այլևս չի ունենա սեռական հոլով: Սակայն այդտեղ սեռական հոլովի իմաստը կա, բայց արտահայտվում է այլ ձևով: Ֆրանսերենը ոչ մի հոլով չունի, բայց սեռական և տրական ֆունդամենտալ հոլովներն հասկացություններն ունի, որոնք արտահայտվում են նախդիրով և գոյականի ուղիղ ձևով, օրինակ՝ le livre de mon maître (իմ ուսուցչի գիրքը): Je donne le livre a mon maître (ես տալիս եմ գիրքը իմ ուսուցչին): Տեսե՛ք, որ սեռական ու տրական հոլովները փոխարինված են նախդիրներով և բառի ուղիղ ձևով. տեսե՛ք, որ այս երկու հոլովին փոխարինող նախդիրները տարբեր են: Ուրեմն ֆրանսերենը զգում է սեռական և տրական հոլովների տարբեր իմաստները, որոնք արտահայտվում են տարբեր նախդիրների միջոցով: Այդպես է վարվել, և բոլոր լեզուներն էլ այդպես են վարվում, որովհետև սեռական և տրական հոլովները նշելիք ունեցող լեզուներում ֆունդամենտալ հասկացություններն են արտահայտում: Առանց այդ հասկացությունների տարբերակման լեզվի մեջ կստեղծվեն սոսկալի խեղաթյուրումներ, լեզուն կդադարի իր ֆունկցիան կատարելուց: Եթե ֆրանսերենը, որ ոչ մի հոլովաձև չունի, նույնացնեք դրանք, կստեղծեք շփոթ, և նա կդադարի իր ֆունկցիան կատարելուց: Բայց տարբեր նախդիրներ գործածելով՝ ֆրանսերենը կանխում է այդ աղետը:

Հայերենի սեռական, տրական ու հայցական հոլովները ֆրանսերենի նման էվոլյուցիայի շեն ենթարկվել, արտահայտման որևէ այլ ձևով չեն փոխարինվել, այլ արտահայտվում են վերջավորությամբ։ Ուրեմն նրանք հայոց լեզվի մեջ իբրև անջատ հոլովներ մընում են և այն վերջավորությամբ, ինչ որ ըստանում են, լինեն դրանք նույնը, նման թե փոքր ու մեծ տարբերությամբ՝ այլ հոլովների վերջավորությունների հետ համեմատած։

Ռ. Իշխանյանը հանել է հայերենից սեռական ու տրական, ուղղական և հայցական հոլովների հասկացությունները, խառնել դրանց ֆունդամենտալ ըմբռնումները և փորձում է հայոց լեզվի վրին փաթաթել շփոթ ու աղավաղումներ։ Բայց նախքան Բլումֆիլդից դասեր առնելը ու գործի դնելը նա դրանք պետք է ենթարկեր մատերիալիստական դիալեկտիկայի քննության, համոզեր մեզ, որ իր առած դասերը մեթոդաբանորեն ճիշտ են (որովհետև միայն այս դեպքում նրանք դրական արդյունք կտան), որից հետո գործեր օգտավետ նպատակներով։ Նա այդ չի անում, հավակնում է չարդելու հայոց լեզվի կայուն քերականությունը, ստեղծելու մեծ շփոթ, որի առաջին դոճն էլ, ինչպես կտեսնենք հետո, ինքն է դառնում։

Երբ Ռ. Իշխանյանը հոլովների քանակն է ուզում որոշել, նա ամբողջ 17 էջ (15—32) խոսում է բառի ձևափոխությունների մասին և միայն 2,5 էջ (32—34) նվիրում իմաստներին, այն էլ ինչպե՞ս։ Մարդը մեխված մնում է մի մակարդակում և այդ մեռյալ կետից երաշխավորում է հայոց լեզվի գոյականների հարացույցի ստեղծումը՝ հինգ հոլովներով։ Իշխանյանը փորձում է տալ «հոլովում» բառի սահմանումը, և երկար խոսելով այդ մասին, ձևափոխումների երեք կարգ է սահմանում։ Նա գտնում է, որ «գոյականին հատուկ է Լեռականական միայն ԼԵԼ՝ ձևափոխություն, րվի, ուլովի և ուղառություն» (էջ 16, բնորոշումն իրենն է— Ա. Ղ.)։ Այստեղ անունների շարքից ստրատեգիական նկատառումով դուրս է հանում դերանունները, քանի որ դրանց մասին խոսելը իրեն ձեռնառու չէ, բայց հետո անդրադառնում է դրանց և այն էլ ինչպե՞ս։ Ուստի մենք էլ իր տեղում կանդրադառնանք դրանց։

Իր սահմանումի մեջ հեղինակը հոլովական ձևափոխությանը հավասարեցնում է հոգառությունը (խոսք կարող է լինել որոշյալը, և հոգերի մասին) և հոգնակի մասնիկ ընդունելու Որոշյալ հոգառության ենթակա են

հայերենի գոյականի ուղղական, տրական և հայցական հոլովները։ Հոգառությունը, իրոք, երբեմն կարող է հոլովակազմության հատկանիշ լինել։ Երբ ձևական հատկանիշների նույնություն է ստեղծվում, հոգառությունն օգնում է տարբերակմանը։ Այսպես՝ արևելահայ գրական լեզվի մեջ սեռականը որոշյալ հոգառություն չունի, որովհետև նա ինքնին կարող է արտահայտել և՛ որոշ, և՛ անորոշ ըմբռնումներ և դա նրա սեռականի, հատկանիշն է, որովհետև նրա հոլովական ձևական հատկանիշը նույնացել է տրականի մի ձևի հետ։ Բայց այդ հոլովը հայերեն մտածողի և խոսողի գիտակցության մեջ մնում է, ուստի նա անհոգառու հատկանիշով տարբերվում է տրականից, որն ունի հոգառու հատկանիշ։ Այդ պատճառով էլ սեռականը ձևով տրականից տարբեր է, ուստի սեռականը հայերենում ձևով գոյություն ունի։ Բա այնքան ուժեղ է արտահայտված հայերենի մեջ, որ դերանուններում, որոնք իր քննության ոլորտից առժամանակ դուրս է գցել Ռ. Իշխանյանը, հոգը (ն) անբաղատելիորեն միացել է տրական ձևին և դարձել նրա հոլովական վերջավորությունը (օրինակ՝ սեռ. սրա, տրական՝ սրան և այլն)։ Այդ տեղի է ունեցել այն պատճառով, որ դերանուններն անորոշության հատկություն չունեն, միշտ որոշյալ լինելով որոշել է ն հոգի բախտը դերանունների հոլովման մեջ, վերածելով նրան վերջավորության։ Գերմաներենում հաճախ սեռական, տրական և հայցական հոլովները միմյանցից տարբերվում են միայն հոգով (Gen. des Knaben, Dat. dem Knaben, Akk. den Knaben)։

Այսպիսով, Ռ. Իշխանյանի 3-րդ ձևափոխության հարցը աղաղակում է իր դեմ։ Ռ. Իշխանյանի 1-ին «ձևափոխությունը» հոգնանիշ (ինչպես ինքն է ասում) մասնիկն է։ Բայց դա այնպիսի ձևափոխություն չէ, որ ղեկնք հոլովման հաշվառար, քանի որ բացի ԼԵ կամ ԵԼԵ հոգնակի վերջավորություններից, մյուսները գրական արժեք չունեն կամ բացառություններ են։ Եվ հոգնակի ունենում է միայն մարդ—մարդիկ բառը, այլ՝ միայն կին—կանայք բառը (հնացած են՝ պարոնայք, տիկնայք)։ Ք հոգնակի վերջավորություն ունենում են դերանունները։ Մնում են Ռ. Իշխանյանի 2-րդ ձևափոխությունները, որոնցով և նա որոշում է հոլովի քանակը։ Այստեղ նա վերցնում է ջուր կամ օդ բառը, մեխանիկական հատումներով որոշում, որ այդ բառերն ունեն 4 ձևափոխություններ՝ ջրի, ջրից, ջրով, ջրում, այսինքն՝ ի, ից, ով, ում վերջավորություններ, որոնց պետք է ավելացնել նաև զրո վերջա-

վորությունը ձևը, որով ստացվում են հինգ ձևափոխություններ: Բայց ի՞նչ է այդ մեթոդն ինքնին, ինչպիսի՞ մոտեցումն է որոշում հայոց լեզվի հարացույցի բախտը:

Լեզուն գլուխ չէ, որ մկրատով խուզեն: Վեզուն գործնական, ուրիշի համար գոյություն ունեցող, դրանով իսկ նաև ինձ համար ևս գոյություն ունեցող իրական գիտակցություն է» (Մարքս): Ուրեմն լեզուն հնչող գիտակցություն է: Նրա ուսումնասիրությունը մկրատով չի կատարվում, այլ միասնությամբ առնված ձևի և բովանդակության ֆննությամբ: Սուկ ձևեր գոյություն չունեն. նրանք գոյություն ունեն բովանդակության հետ միասնաբար, և լեզվի ուրեք կատեգորիա որոշելիս պետք է ելնել այդ միասնությունից: Իշխանյանը հայտարարում է, թե «...անտեղի է խոսել լեզվաբանության մեջ «ձևերի գերազնահատության», «ձևապաշտության», «ձևամոլության» և նման բաների մասին...» (էջ 8—9): Անտեղի է խոսել, որպեսզի Ռ. Իշխանյանն իր գրքույկի 17 էջերում մկրատն առած բառից կտրի մեկ վերջավորությունը, ապա երկրորդը, ապա երրորդը և այլն և ապա դրանք դասավորի իրար կողքի, համարի ու որոշի, թե հայերենն ունի հինգ ձևափոխություն, ուրեմն՝ հինգ հոլով: Եվ գոհ ու երջանիկ է, որ այդ բոլորը կատարելու համար նրան չի վիճակվում դուրս դալ ձևաբանական մոգական մակարդակից, այսինքն՝ լոկ ձևերի աշխարհից: Եթե դա ցայտուն արտահայտություն չէ ֆորմալիզմի և մեխանիցիզմի, ապա ի՞նչ է: Բավական է դուրս գանք ձևամոլության այս կաշկանդումից, և Իշխանյանի կառուցած ամբողջ կոնցեպցիան կխորտակվի: Այսպես՝ ընդունենք որ (այդպես ընդունված է բոլոր ոչ ձևապաշտական և ոչ կառուցողական քերականություններում) հոլով նշանակում է բառի ձևը, որը ցույց է տալիս բառի իմաստը և պաշտոնը նախադասության մեջ: Ուրեմն սեռականը ցույց է տալիս պատկանելություն և նախադասության մեջ լինում է հատկացուցիչ, ունենում է անհոգ ձև (օրինակ՝ ծառի տերևները քափվել են: Այս ծառի տերևները քափվել են), տրականը ցույց է տալիս մի առարկա, որին հանգում է ենթակայի գործողությունը, ունենում է նաև հոդառու ձև (օրինակ՝ Կարապետը մոտեցավ մի ծառի: Կարապետը մոտեցավ այս ծառին):

Ուրեմն հարացույցի մեջ պիտի դնել.

Ուղղ. ծառ, ծառը

Սեռ. ծառի

Տրակ. ծառի, ծառին:

Ահա ինչ կարող է անել իմաստը Իշխանյանի հարացույցի հետ, եթե նա ձևն ու

բովանդակությունը միասնաբար վերցնել: Հոլովումը պատմականորեն ձևավորվել է շարահյուսության մեջ և այժմ էլ դրսևավորվում ու ճանաչվում է շարահյուսության մեջ: Այդ միջոցով է, որ ձևաբանական կարգերը մարդն օգտագործում է խոսք կառուցելու համար: Զևարանությունն ինքնաբավ բընագավառ չէ, նա բխում է միայն և միմիայն լեզվական ամբողջ համակարգն ամփոփող շարահյուսությունից:

Ռ. Իշխանյանը պրոբլեմ է դարձնում ամեն մի հարց, որ գիտությանը վաղուց ծանոթ է և վճռված:

Այսպես՝ երբ 17 էջերում մկրատով գործելուց հետո անցնում է բովանդակության հարցին (էջ 32—34), նա կասկածի տակ է դնում կամ պրոբլեմ դարձնում այն, թե «մեր համոզմամբ անհնար է 1-ին և 2-րդ հոլովների (1-ին և 2-րդ, նկատի ունեցեք — Ա. Ղ.) իմաստային բնորոշումը տալ, այսինքն՝ այդ հոլովներն այնքան բազմիմաստ են, որ անհնար է յուրաքանչյուրի բազմիմաստությունը իմաստային մեկ սահմանման մեջ տալ» (էջ 33): Նախ՝ նկատում ենք, որ Ռ. Իշխանյանը հոլովների անուններում արդեն անցել է մաթեմատիկային (1-ին հոլով, 2-րդ հոլով, 3-րդ հոլով և այլն): Երկրորդ՝ ուզում է ասել, թե ուղղականն ու տրականը բազմիմաստ են և նրանց յուրաքանչյուրի բազմիմաստությունը իմաստային մեկ սահմանման մեջ ընդգրկելն անհնարին է: Եե, իհարկե, այսպես կլինի, որովհետև նա ուղղականին միացրել է հայցականը և կոչում է 1-ին հոլով, որն այդ պատճառով էլ կլինի շատ բազմիմաստ: 2-րդ հոլովի մեջ ընդգրկել է սեռականը, տրականը և հայցականը և հետո կանգնել ու ասում է, թե այդ բազմիմաստությունները անհաղթահարելի են: Համաձայն ենք, իհարկե: Բայց ո՞վ խնդրեց միացնելով հոլովները շփոթ ըստեղծել և ապա խոստովանել, որ ստեղծված շփոթից անհնար է դուրս գալ: Պատճառը պարզ է, — շարունակում է Ռ. Իշխանյանը, — հոլովի իմաստը ի վերջո բխում է շարահյուսական գործածությունների գումարից (իսկ ձևերի՞նք — Ա. Ղ.), որքան շատ են նրա շարահյուսական կիրառությունները, այնքան տարբեր են նրանք նշանակությամբ, մանավանդ հակադիր, այնքան դժվար է հոլովի իմաստային մեկ բնորոշում տալը» (էջ 33): Ուրեմն առավել ևս հիմնավորված է հոլովներն իրար շխառնելը:

Բացի ֆորմալիստներից բոլոր քերականագետներին հայտնի է, որ սեռականը ցույց է տալիս պատկանելություն և լինում է նախադասության հատկացուցիչ անդամ, ուղղա-

կանր ցույց է տալիս գործող կամ լինող անձը և լինում է նախադասության ենթակա անդամ, տրականը ցույց է տալիս հանգում և լինում է անուղղակի խնդիր անդամ, հայցականը ցույց է տալիս ենթակայի գործողությունը կրող առարկան և լինում է նախադասության ուղիղ խնդիր անդամ և այլն: Այդ գիտեն և չեն շփոթում բոլոր նրանք, ովքեր դասական քերականություն են անցել, այդ չգիտեն կամ չի ուզում իմանալ միայն ֆորմալիստը: Ռ. Իշխանյանը դրանք բոլորը վերածելով պրոբլեմի, գրում է. «Հաղիվ թե հիմնավորվի այն կարծիքը, որի համաձայն հոլովը կարող է իմաստային բնորոշման ենթակվել ըստ յուր մեկ, այսպես կոչված, գլխավոր կիրառության: Օրինակ՝ ասում են, թե 1-ին հոլովը պետք է բնորոշել այնպես, ինչպես շարահյուսական ենթական է բնորոշվում, քանի որ այդ հոլովի գլխավոր կիրառությունը ենթակա ձևավորվելն է» (էջ 34): Այնուհետև գալիս է շինծու պրոբլեմը. «Բայց ինչպե՞ս որոշենք որ այդ հոլովի գլխավոր կիրառությունը, իրոք, ենթակա է: Արդյո՞ք վիճակագրության մեջ: Այդ դեպքում նախ պետք է ապացուցել, որ այդ հոլովը ամենից շատ ենթակայի պաշտոնն է ձևավորում: Իսկ եթե պարզվի, որ այդպես չէ՝ նվազագույնը պետք է ձևավորում է խոսքի հոգուտ ենթակայի, արդյո՞ք ճիշտ կլինի զանց առնել այդ հոլովի մյուս բոլոր կիրառությունները, որոնք բոլորը, անշուշտ, ավելի մեծ քանակ կկազմեն հայերեն խոսքում, քան միայն ենթական: Եվ, վերջապես, 1-ին հոլովին ենթակայի բնորոշում տալուց առաջ դեռ պետք է գտնել այդ բնորոշումը» (էջ 34):

Ռ. Իշխանյանի համար ձևից բացի մնացած ամեն ինչը վերստուգելի է և պրոբլեմ: Բայց ուղղական հոլովը ճանաչվել է պատմականորեն և այժմ էլ ճանաչվում է նախադասության մեջ ենթակայի դերով, և դա ոչ միայն նրա գլխավոր հատկանիշն է, այլև նրա իմաստային դերականությունը մյուս բոլոր կիրառությունների հանդեպ: Ճանաչողության պրոցեսը կատարվում է հաջորդականությամբ. նախ ճանաչվում են երևույթի գլխավոր և ամենաակնառու հատկանիշները, ապա միայն՝ երկրորդականները: Այդ պրոցեսը մարդուն բերում է երևույթի խոր և բազմակողմանի ճանաչմանը: Այսպես՝ մաթեմատիկայի մեջ $2+2=4$ համարվում է բացարձակ ճշմարտություն, բայց մի՞թե հայտնի չէ, որ $-2+(-2)=-4$, որ $-2+(-2)=-4$: Սակայն մարդիկ մաթեմատիկական սկսում են սովորել $2+2=4$ -ով: Ինչու՞ է դա պրոբլեմ: Դա ճանաչողական պրո-

ցեսի աստիճանականությունն է: Այդպես է և հոլովների ճանաչման հարցում:

Ուղղականը նախ ճանաչում են նրա գրվածքը, ենթակա լինելու իմաստով և պաշտոնով և ապա մյուս, երկրորդական իմաստներով և պաշտոնով:

Սեռականը ճանաչում են նախ նրա արտահայտած պատկանելության իմաստով և հատկացուցչի պաշտոնով, ապա միայն այլ իմաստներով և պաշտոնով:

Տրականը ճանաչում են հանգման իմաստով և անուղղակի խնդիր պաշտոնով, ապա նրա այլ, երկրորդական իմաստներով և պաշտոնով:

Հայցականը ճանաչում են գործողությունը կրող առարկայի իմաստով և ուղիղ խնդիր պաշտոնով և ապա այլ իմաստներով և պաշտոններով:

Դա է քերականական կարգերի ճանաչողական պրոցեսը, դրան դեմ լինելը նշանակում է դեմ լինել մարդու ճանաչողական գործունեության հիմնական պրոցեսին, դեմ լինել մարդու գիտակցության հարստացման դիալեկտիկ պրոցեսին:

Բայց հետևելով Բլումֆիլդին, Ռ. Իշխանյանը այլ կերպ է դատում. «Ըստ երևույթին, — գրում է նա, — պետք է խուսափել հոլովների իմաստային բնորոշումներից» (էջ 35): Այ, հենց այդ ասելու համար էր նա հետաձգում իմաստների հարցը: «Նպատակահարմար է հոլովները բնութագրել ըստ հոլովանիշ կամ հոլովակերտ թեքության» (էջ 35): Բայց տեսնենք ինչ կստացվի դրանից: Նա ուսուցանում է. «2-րդ հոլով, կերտիչ թեքության են (փոփոխականներ)՝ ի. ու, ոչ. վա. աճ. ա. ո. յաճ. աճց մասնիկները և այ/ո, ու/ա, ը/ե, յու/յա, ի/ու, ու/վա, յ/նց, ք/ց, ի/ոց ձայնադարձները» (էջ 32): Եվ դա կոչվում է գիտություն...

Եթե դա գերֆորմալիզմ չէ, ապա ի՞նչ է: Ոչ ոք չի նստի, ավելի ևս աշակերտը, և այդ անբովանդակ թվարկումն անգիր անի, որպեսզի սովորի մեկ հոլով: Ապա եթե ցանկանա էլ անգիր անել, չի կարողանա: Ոչ մի անիմաստ բան մարդը չի սովորում: Եթե դա տեղի է ունեցել երբեք, ապա տեղի է ունեցել միշտ անդարձ, տերթոդիկյան դպրոցում, անբովանդակ և սխալաստիկ ուսուցման տիրապետության շրջանում: Վաղուց արդեն անցյալ է դա, անդառնալի անցյալ:

Ռ. Իշխանյանը շոշափում է հոլովների անվան հարցը: Նա հասկանում է բոլորը, բացի սեռական-տրական կամ միայն տրական անունից: Սեռական-տրական անվանումը հարմար չի համարում, որովհետև դա «հիշեցնում

է լեզվի տարածամանակյա մակարդակում եղած երկու առանձին հոլովների գոյությունը և շփոթություն ստեղծում» (էջ 36)։ Տեսնում եք, շփոթություն ստեղծում է ոչ թե Ռ. Իշխանյանի մկրատը, նրա գերսխուլաստիկան, այլ սեռական և տրական հոլովների առանձին գոյությունը։ Այդ հոլովներն առանձին-առանձին դրված են դպրոցական դասագրքերում, և շուրջ քառասուն տարի շատ լավ յուրացնում են աշակերտները, և մինչև այսօր ոչ ոք չի համարձակվել միացնել կամ մեկը դուրս գցել քերականությունից, որովհետև դրանք իրապես կան մեր լեզվի մեջ։ Իսկ Ռ. Իշխանյանը ձևացնում է, թե դրանք վաղուց չկան և չպետք է հիշեցնել, որպեսզի շփոթ չստեղծվի։ Այդպես է խեղաթյուրվում իրականությունը։

Հաշվեհարդար տեսնելով սեռականի հետ, նա ավելացնում է, որ իրեն դուր չի գալիս տրական անունը «...այն պատճառով, որ րստեղծում է սխալ տպավորություն, թե իբրև սեռական հոլովը հանվում է հայերենի հոլովման հարացույցից և թողնվում է տրականը...»։ Այնուհետև շարունակում է. «Զպետք է հանել որևէ հոլով կամ թողնել, այլ պետք է որոշել լեզվի մեջ եղած հոլովները և նրանց անուններ տալ» (էջ 36)։ Տեսնում եք, թե ինչքան անտեր է եղել հայոց լեզուն, 1400 տարվա ընթացքում քերականություն չի ունեցել, նրա հոլովները որոշված չեն եղել և անուն չեն ունեցել, և ահա եկել է Ռ. Իշխանյանը ու Բլումֆիլդի «օգնությամբ» լուսավորելով իր դարի հայոց լեզուն, որոշում է նախ նրա համար հոլովներ, որպեսզի հետո էլ այդ հոլովների համար անուններ գտնի։ Այդ նշանակում է, թե պետք է դեն դնել մեր քերականության պատմությունն ու ավանդույթը, ապա նստել, նրա հոլովները Ռ. Իշխանյանի մկրատով որոշել ու նոր դրանց անուն տալ։ Մինչև ու՞ր կարող են հասնել մարդու հավակնության սահմանները։

Վերևում տեսանք, թե Ռ. Իշխանյանը ինչպես որոշեց հայերենի հոլովները, այժմ տեսնենք, թե ինչպես պիտի նրանց անուն տա։ Նրա կարծիքով սեռականին, տրականին և մասամբ հայցականին (որը նա ոչ զգում է, ոչ տեսնում, ոչ հասկանում) պետք է տալ ստացական անունը։ Ի՞նչ աշակերտներին բացատրել ուզենանք ստացական հոլովը, դե, իհարկե, պետք է մի հարմար օրինակ գտնենք, թեկուզ հետևյալ նախադասության նման. Ես բռնուցքով խփեցի քո մոռոթին։ Մոռոթին — ստացական հոլով է, որովհետև քո մոռոթը ստանում է իմ բռնուցքի հարվածը։ Զարմանալի քերականություն։ Ցանկանալով կոնկրետ օրինակով ցույց տալ, թե որքան հեշտ է իր անուններով հոլովը գտնելը, Ռ. Իշխանյանը

«Հոլովների շարահյուսական կիրառությունը» գլխում իր տերմիններով վերլուծել է նախադասությունը և ստացական հոլովի օրինակը գտել հետևյալ նախադասության մեջ.

«...գլուխը (ու., այսինքն՝ ուղղական — Ա. Ղ.), ոչինչ, հավաք ու կլոր էր, մինչև սոննին (ս., այսինքն ստացական — Ա. Ղ.) նույնիսկ գեղեցիկ էր...» (էջ 47, ընդգծումը մերն է — Ա. Ղ.)։

Այդ ինչպե՞ս եղավ, որ սոնին ուղղականանման հայցական ձևը դարձավ ստացական։ Ո՞վ կհավատա, որ Ռ. Իշխանյանը դասական քերականությունն ավանդելիս սոնին (մինչև սոնին) բառի հոլովը որոշել չի կարողանա, այլ ստացական անվամբ կշփոթի սեռականի և տրականի հետ։ Մեղավորը Բլումֆիլդն է. նա, երևի, սովորեցրել է, որ գրված բառի մեջ իմաստ չպետք է փնտրել, ինչպես և չի փնտրում Ռ. Իշխանյանը¹։ Դրա հետևանքով պատահաբար հանդիպած սոնին ձևն էլ հիշեցնում է սեղանին, աթոռին, զբի՛ն և նրման ձևերին, ուրեմն իր սահմանած ստացական հոլով է տեսնում այստեղ, որ չկա։ Եթե ինքը՝ Ռ. Իշխանյանն առաջին փորձից խճճվում է քերականության մեջ, ինչպե՞ս կլինի քերականությունը նոր սովորողի, հատկապես աշակերտի վիճակը, երբ Իշխանյանն իր տեսությունը, որպես քերականագիտություն, փորձի դպրոց մտցնել։

Ռ. Իշխանյանի նպատակն է ջարդել անունների՝ դասական լեզվաբանության ավանդական ձևաբանությունը, այդ պատճառով հոլովների քանակը մկրատով որոշելիս նա առաջարկում է դերանուններին ձեռք չտալ (էջ 16), որովհետև իրեն ձեռնտու չէ, դրանք մկրատի չեն ենթարկվելու։ Դատաստան տեսնելով ավանդական քերականության գոյականի հոլովների և նրանց անունների հետ, Ռ. Իշխանյանը 32—42 էջերում անդրադառնում է դերանուններին։ Այստեղ մկրատն անգոր է, ուստի ընդունում է, որ «դերանունների խմբից 9 միավոր տարբեր կերպ են հոլովվում» (էջ 37), որ «որոշ

¹ Սովետական քննադատությունը դիսկրիմիտիվիզմի հիմնադիր Բլումֆիլդի ուսմունքի մասին գրում է. «Дескриптивист должен применять только формальные методы анализа, что не позволяет использовать значение в качестве отправного пункта исследования, а также критерия выделения и классификации лингвистических единиц (տես «Основные направления структурализма», М., 1964, էջ 343)։ Դա ասված է նաև իր. Իշխանյանի մասին, որը, ինչպես տեսանք, Բլումֆիլդի հավատարիմ հետևի՜վորն է։

հոլովների դեպքում ոչ թե բառը թեքվում է, այլ մի ուրիշ բառ է այդ հոլովի դե-
րը կատարում» (էջ 37): Չկարողանալով
որևէ ձևով դրանց հոլովման սեռական ձևը
ժխտել, նա եզրակացնում է. «Այսպիսով, հիշյալ
8 բառերն ունեն 6 հոլով, և միայն այդ պատ-
ճառով կարծես ինչ-որ հիմք է առաջանում այդ
ույթ բառի համար արևելահայերենի հոլովման
ընդհանուր հարացույցում 6 հոլով դնելու»
(էջ 41):

Ռ. Իշխանյանը կարծում է, որ հարա-
ցույցում հոլով ունենալու հարցը ոչ թե լեզ-
վի իրականությունը ճշտադույնս արտացոլելու
հարց է, այլ պայմանավորվածության հարց:
Մինչդեռ հոլովը ձևաբանական մտածողության
կարգ է և ոչ սրա կամ նրա քմահաճույքը: Իսկ
այդ կարգը կա ամեն հայի գլխում, գրագետ
թե անգրագետ (բացի որոշ կարգի «գիտնա-
կաններից»): «Գեորգի տունը վերադարձրին
Գեորգին» նախադասության մեջ Գեորգ բառի
երկու ձևերը տարբեր, հակադիր ըմբռնումներ
են արտահայտում՝ յուրաքանչյուրը սպեցիֆի-
կացիայի ենթարկված և եթե նրանց խառնես,
կխառնվեն ամբողջ մտածողությունը, ըմբռ-
նումները, կխճճվի լեզուն, ինչպես խճճվել է
Ռ. Իշխանյանի խոսքում: Դրանց իմաստը
նույնը չէ, պաշտոնը նույնը չէ, միևնույն լրա-
ցումը չեն, միևնույն հոլովում դրված լինել չեն
կարող, նույնություն չեն նաև ձևով: Առաջինը
անվան լրացում է, երկրորդը՝ բայի, առաջինը
անհոգառու է, երկրորդը՝ հոգառու: Առաջինը
հատկացուցիչ է, երկրորդը՝ խնդիր: Դրանց
միմյանց ձուլելը կառաջացնի խեղաթյուրում:
Այսպես կարող է խեղաթյուրվել ամբողջ մի
ժողովրդի լեզուն, մտածողությունը:

Ռ. Իշխանյանը վախենում է, որ եթե ութ
բառի (դերանվան ձևերի) համար սեռական հո-
լովի գաղափարը դնենք, ապա դա կնշանակեր
«...տասնյակ հազարավոր բառերի հստակորեն
5 հոլով ունեցող հարացույցը ծանրաբեռնել
VI հոլովով, որը հատուկ է միայն 8 բառի...»
(էջ 41): Եվ հանձնարարում է. «...ընդհանուր
հարացույցում պետք է մնա 5 հոլով...»
(էջ 41), քանի որ իբր «...բնավ մերժելի չէ
հոլովական ընդհանուր հարացույցի կողքին տալ
8 բառերի հոլովման առանձնահատկությունը
իբրև շեղում... ընդհանուր կանոնից» (էջ 42):
Ահա այդ ծանր պրոբլեմի «հանճարեղ» լուծու-
մը. հարկ չկա, որ հայոց լեզվի քերականու-
թյունը ծանրաբեռնվի սեռական և տրական
առանձին հոլովներով, իսկ հայոց լեզուն թող
խեղաթյուրվի:

Բայց, ինչպես ցույց է տվել հարյուրավոր
տարիների պրակտիկան, այդ հոլովները ոչ թե

ծանրաբեռնություն են, այլ հարստություն:
Հայերենի սեռական, տրական և ճայցական
հոլովները հայ քերականության այն ֆունդա-
մենտալ հարստություններից են, որոնք նրան
հնարավորություն են տալիս նրբորեն դրսևո-
րելու իրականությունը, ճանաչելու ու հասկա-
նալու ուրիշ լեզուների համանման հարստու-
թյունները և դառնալու բարձր կարգի լեզու:
Բայց Ռ. Իշխանյանը, այնուամենայնիվ, անդա-
մահատել է ուղում հայոց լեզուն: Դա արդեն
մարմաջ է, ոչինչ անել չես կարող:

Ռ. Իշխանյանը հոլովների հարացույցի
համար կիրառում է նաև թվաբանությունը: Նա
մտցնում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ
հոլովների գաղափարները, հոլովը նրա համար
թիվ է և ոչ որակ, իսկ հինգ թիվն ավելի փոքր
է, քան յոթը, ուրեմն, ըստ նրա ըմբռնողու-
թյան, ուսուցումն էլ կհեշտանա, քանի որ հո-
լովների թիվը քիչ է: Բայց այդ քիչ թիվը փոր-
ձել են դպրոցում (1924—1930 թթ.) և տա-
պալվել: Աշակերտները սովորել են հինգ ա-
նուն՝ առանց իմաստի, բայց երբ փորձել են
ամեն մեկին, Ռ. Իշխանյանի նման, իմաստ
կպցնել, ստացվել է ամեն միտք, շունչ, ստեղ-
ծագործություն, լեզու սպանող գերֆորմալիզմ:
Հոլովները հանվում են ոչ միայն օւաբանու-
րյան մակարդակից, այլև շարանյուսական:
Արտաքինից թվում է, թե գործը հեշտանում է,
երբ հոլովների թիվն իջնում է հինգի, բայց դա
լինում է այն ժամանակ, երբ մարդիկ դադա-
րում են մտածելուց, անտեղյակ են մնում կամ
լինում հոլովների իմաստներից. այսինքն՝ լեզ-
վական բովանդակությունից: Շատ ավելի օգ-
տավետ և հեշտ է սովորել տասը հոլով իրենց
բովանդակությամբ, քան հինգը՝ անբովանդակ:
Բացի ֆորմալիստներից ում է պետք իմաս-
տից կտրված անբովանդակ հոլովը:

Ռ. Իշխանյանի անձնական օրինակը ցույց
տվեց, թե հայոց լեզվի համար ինչ ծանր հե-
տևանքներ էին պատրաստում ֆորմալիստները
մի երկու տարի առաջ: Կովել նորի, թե հնի
պատմուճանով հանդես եկող ֆորմալիզմի դեմ,
նշանակում է կովել հայոց լեզվի համար, հա-
յոց դրական լեզվի անխաթար և բնական զար-
գացման և մասսայական ուսուցման համար:
Բայց դրա համար պետք է ճանաչել ֆորմա-
լիզմը, ինչպիսի փետուրներ էլ նա հագած
լինի:

Հոլովների հաջորդականությունը որոշելիս,
ինչպես ասացինք, Ռ. Իշխանյանը դիմում է
մաթեմատիկական թվարկման: Նա գրում է.
«Եվ այդպես, հայերենի հոլովներն են.

1-ին՝ ուղղական, 2-րդ՝ ստացական, 3-րդ
բացառական, 4-րդ՝ գործիական, 5-րդ՝ ներ-
գոյական» (էջ 37): Բացի այդ, նրան դուր չի

գալիս, որ հայերենի հոլովների թիվը 5-ից ավելի է:

Պարզվում է, որ այսպիսի քերականագիտությունը նա մենակ չէ: Հարավսլավական մեծ գրող Իրանիսլավ Նուշիչը վկայում է, որ իրենց մոտ էլ կան այդպիսիները: Նա գրում է.

«Վերջապես մի անգամ բնորոշ ժամանակ հինգերորդ հոլովի մասին հարցրեցի հենց իրեն՝ ավագերեցին, ... այդ հարցը նրան էլ շփոթեցրեց:

— Հինգերորդ հոլով... հինգերորդ հոլով... կակազելով սկսեց տեր հայրը... իսկ ընդամենը քանի՞ հոլով եք սովորել:

— Յոթ:

— Յոթ,— զարմացավ տեր հայրը, — Դա շատ է: Դա չափազանց շատ է:

— Շատ է, — հաստատեցի ես ծանր հառաչելով:

— Անհասկանալի է, — ասաց տեր հայրը՝ դիմելով ծնողներին, — այդքան հոլով ինչի՞ է պետք: Դա պարզապես ուսուցչական քմահաճություն է: Հապա ինքներդ մտածեցե՛ք: Գեղմանիան, որ այդքան մեծ և հզոր պետություն է, ընդամենը չորս հոլով ունի... Իսկ ի՞նչ ենք մենք: Մի փոքր Երկիր, ընդամենը մի քանի շրջան և, ահա, խնդրեմ, յոթ հոլով ունենք: Դե՛, ձեզ եմ հարցնում, մի՞թե սա քմահաճություն չէ: Մի՞թե մենք մեր ոտքը մեր վերմակի երկարությունը ենք մեկնում»²:

Անվերայ հարված նշանին՝ ֆորմալիզմին:

* * *

Ռ. Իշխանյանի գրքույկի մեծ մասը նվիրված է բալի ուսումնասիրությանը: Այս բաժնում ևս նա առաջնորդվում է ձևով, աշխատելով մնալ ձևաբանության մակարդակում: Բայց բայը խոսող խոսքի մաս է, նրա ձևափոխությունները ինքնուրույնաբար նախադասություններ են կազմում, ուստի նրանց ձևերի քննության ժամանակ բովանդակությունն առկա է և քննողին միշտ ղգալ է տալիս իր մասին: Այդ պատճառով Ռ. Իշխանյանը հաճախ իրեն դավաճանում է և ցուցաբերում իրական մոտեցում, օգտագործում, անկախ իր կամքից, շարահայտական մակարդակը: Դրա հետևանքով բայական կառուցվածքի նրա վերլուծությունը մի շարք հարցերում օժտված է ճշմարտացիությամբ, թեև զերծ չէ նաև վրիպումներից: Նա հայտնում է այն վաղուց ծանոթ և ճիշտ միտքը, որ հայերենի դերբայներից մի քանիսը բառական անկախություն չունեն, այլ կատա-

րում են հիմքի դեր (անկատար, ասպառնի, վաղակատար, ժխտման դերբայներ), իսկ օժանդակ բայերը ձևավորում են նրանց, տալով «ղիմարվածամանակայնություն» (որքա՞ն հաջող տերմին, դպրոցում անմիջապես կսովորեն): Նրան հաջողվում է ապացուցել, որ ապառնի դերբայը և անորոշ դերբայի տրական հոլովաձևը միևնույն ծագումն ունեն, բայց իմաստով տարբերակված են: Այդ տարբերակումը որոշելու համար նա օգտագործում է հոդառու և ոչ հոդառու հատկանիշը (հոլովման մեջ այդ մեթոդը ժխտում է): Այսպես՝ խմելու ձևը կարող է լինել դերբայ և ժամանակ կադմել, նա անհոդառու է (խմելու եմ, խմելու ես և այլն), բայց այդ նույն ձևը, իբրև տրական հոլովաձև հոդառու է (խմելուդ պահին և այլն): Հաջող փաստարկում: Համոզիչ փաստերով հեղինակը հիմնավորում է Մ. Արեղյանի բայական երկհակադրական կառուցվածքի ճշմարտացիությունը (գրում եմ— գրում էի, գրելու եմ— գրելու էի և այլն) և գտնում. «...խախտել զույգերի բնական հակադրությունը (և հարևանությունը)³, կնշանակի բողբոջել կամ թաքցնել հայերենի դիմավոր բայերի համակարգի իրական կամ բնական կառուցվածքային պատկերը» (էջ 103), ուստի և «...ինչ կարծիքներ էլ լինեն հայերեն դիմավոր բայերի հարացույցի ծավալի, նրա մեջ ընդգրկվելիք միավորների վերաբերյալ, միևնույն է, հարացույցի գծապատկերի բնույթը, կապված շարային զույգերի առկայության հետ, կմնա անխախտ, և հարացույցի որևէ փոփոխություն, այդ զույգերը միմյանցից անջատելու նպատակով, կարող է միայն սքողել հայերենի մի շատ կարևոր կառուցվածքային առանձնահատկությունը» (էջ 104): Այդ ճիշտ դրույթը, այնուամենայնիվ, նա հիմնավորում է ձևական օպերացիաներով, մինչդեռ իմաստի փաստարկումը չախախտիչ կլինի բայական իրականությունը խեղաթյուրողների դեմ:

Բայական խոնարհման դրական և ժխտական հարացույցը կազմելիս միայն ձևով առաջնորդվելու սկզբունքը հեղինակին հանգեցնում է անհաջողության և ստիպում նահանջելու իր դիրքերից՝ ասելով. «Սակայն հարացույցի բացասական մասի այսպիսի բաժանումը ըստ եղանակների չի համընկնում դրական մասի բաժանմանը և կարող է անհարմարություններ առաջացնել ընդհանրապես և ուսուցման մեջ: Ուստի նպատակահարմար է եղանակային գծապատկերի միակերպությունը պահպանելու

2 Բ. Նուշիչ, Ինքնակենսագրություն, Երևան, 1972, էջ 84:

3 Ինչ որ արված է միջնակարգի 5—6 դասարանների գործող դասագրքում—Ա. Ղ.:

համար այս մի դեպքում առաջնորդվել միայն (ընդգծումը մերն է — Ա. Ղ.) ըստ բովանդակության» (էջ 113)։

Իսկ հեղինակի լուրջ խոստովանությունն է իր ձեական մեթոդի սնանկության մասին։

Ռ. Իշխանյանը բայերի ուսումնասիրության ընթացքում փորձում է մնալ միայն ձեական մոտեցման դիրքերում, բայց, ինչպես վերևից, բացառապես նրան թելադրում է իր բովանդակությունը, որի հետևանքով նա միշտ հարցերում ճիշտ եղրակացությունների է գալիս։ Սակայն եղանակների հարացույցի քննության մեջ նրա ձեական մոտեցումը տալիս է, և նա «ստիպված է» «առաջնորդվել միայն մի դեպքում ըստ բովանդակության»։

Նրանք, որոնք միշտ առաջնորդվում են բովանդակության և ձևի միասնության սկզբունքով, ելակետ ունենալով բովանդակությունը, երբեք չեն տալիս պատասխան «Ժամանակներ» բաժնում Ռ. Իշխանյանը իրավացիորեն գտնում է. «Հայերենում դիմավոր բայերը երբեք խմբի բաժանել ըստ երբեք պայմանական ժամանակների պատկերացման և ըստ այդմ կազմել նրանց հարացույց, նշանակում է նկարագրել այն, ինչ իրականում չկա»։ Ռ. Իշխանյանը հիմնավորում է, որ սահմանական եղանակում հայերենն ունի 7 ժամանակներ՝ ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար։ Հիմնավորելով դրանց գոյությունը, նա գտնում է, որ կարելի է կոչել դրանք նաև անցյալ ապառնի, անցյալ վաղակատար, անցյալ անկատար։ Այստեղ հեղինակը մատնում է իր մոտեցման ձեական մեթոդը։ Ձեական տեսակետից անցյալ անկատար կոչել, թե անցյալի անկատար միևնույնն է, մինչդեռ բովանդակությամբ միևնույնը չէ։ Անցյալ անկատար, անցյալ ապառնի, անցյալ վաղակատար կապակցությունները ըստ բովանդակության անիմաստ են և չեն համապատասխանում հայերենի ռեալ ըմբռնումներին։ Անցյալ անկատարը կարող է հասկացվել իբրև անցյալում անկատար մնացած, մինչդեռ իրականում այդպես չէ։ Գործողությունը ներկայի համեմատությամբ անցյալում կատարվել-վերացել է, ուստի անցյալ անկատար չէ, բայց մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ եղել է անկատար։ Օրինակ՝ Կարապետը կարողում էր, երբ ներս եկավ Արամը։ Այս նախադասության իմաստից երևում է, որ Կարապետի գործողությունը ներկայի համեմատությամբ ավարտված է, բայց մի անցյալի՝ Արամի գա-

լու մոմենտի համեմատությամբ չէր ավարտված, անկատար էր, ուստի ճիշտ է կոչել անցյալի անկատար։ Ավելի ևս անիմաստ է անցյալ ապառնի կապակցությունը։ Եթե ապառնի է, ինչպես կարող է անցյալ լինել, եթե անցյալ է, ինչպես կարող է ապառնի (կատարելի) լինել։ Իսկ եթե ասվի անցյալի ապառնի, իմաստ կառաջանա, որովհետև ամեն մի անցյալ ունի միշտ ապառնի։ Այդպես է նաև վաղակատարը։ Այսպիսով՝ ձևին հետևելու սովորույթի ճնշման տակ հեղինակը համաձայնում է անցյալ անկատար, անցյալ ապառնի, անցյալ վաղակատար անիմաստ կապակցություններին, թեև համաձայն է այդ կապակցությունները կազմել «անցյալի» բառածնով։

Հեղինակի քերականական դատողությունների կարևոր թերություններից է նաև հարակատար ժամանակների հանելը հարացույցից, այլև հայոց լեզվի քերականությունից։ Այդ անելու համար նա մի կարգի մեջ է դասում հարակատար և ենթակայական դերբայները, որոնց օժանդակ բայ հարադրելով (նստած եմ, նստող եմ) ստանում է բաղադրյալ ստորոգյալներ (նստած եմ—ածականական, նստող եմ—ածականական-գոյականական)։ Իրականում հարակատար և ենթակայական դերբայները թե՛ ֆունկցիայով և թե՛ իմաստով խիստ տարբերվում են միմյանցից։ Հարակատար դերբայը, լինելով ածական դերբայ, իր մեջ համատեղում է գործողության կատարման և դրա ածական հատկանիշ դառնալու գաղափարները, իր մեջ ունի ժամանակի ընդհանուր գաղափար (անցյալում սկսված և մինչև խոսողի ներկան կամ անցյալը հարատևող), իսկ ենթակայական դերբայն արտահայտում է գործողության գաղափար, որը վերածվում է գործողի հատկանիշ՝ առանց ժամանակային ընդհանուր գաղափար արտահայտելու։ Իրա՞ծ ձևից կարող է ստացվել միայն ածական, իսկ գրող ձևից՝ նաև գոյական (փոխանունության մասին չէ խոսքը)։ Օրինակ՝ հայ գրող։ Իրողը քեզ տանի։ Այդ պատճառով ենթակայական դերբայով կազմված ձևերը չեն կարող մտնել խոնարհման հարացույցի մեջ, նրանց ժամանակային իմաստը չեզոքացել է, մինչդեռ հարակատար դերբայով կազմված ձևերը պետք է մտնեն, քանի որ նրանց մեջ ժամանակային իմաստը շեշտված կերպով արտահայտված է։

Ճիշտ է, որ արդի հայերենի ներգործական բայերի հարակատար ձևերը արդեն ենթարկվել են ենթակայական դերբայի վիճակին և ըմբռնել են միայն իբրև ածականներ, բայց կրավորական բայերի, ինչպես և շատ չեզոք

բայերի հարակատար ձևերը շեղված կերպով պահպանում են զործողության ժամանակային հասկացությունները և պետք է մնան հարացույցում (կանգնած եմ, ես, է, էի, էիր, էր, նստած եմ, ես, է, էի, էիր, էր)։ Հեղինակը զբոսնում է, որ «երեխեքը քնած են (ինչո՞ւ ոչ երեխաները քնած են)» կարելի է վերածել «քնած երեխեքի», չնկատելով, որ դրանք բնավ հավասար չեն և բոլորովին այլ բաներ են ցույց տալիս։ «Երեխեքը քնած են» նշանակում է նրանք սկսել են մի վիճակ, որ հարատևում է մինչև խոսողի ներկան, միջոցով «քնած երեխեքը» նշանակում է պարզապես քնած վիճակի հատկանիշ ունեցող երեխաներ։

Բայի սեռի հարցում հեղինակը փորձում է մնալ ձևերի աշխարհում, ուստի սեռը որոշում է «վ» ածանց ունենալու և շունենալու հատկանիշով։ Բայց ի վերջո ընդունում է նաև շեղոք սեռ, անվանելով այն անանցողական բայա-

կարգ։ Ըստ էության, նա այստեղ փորձում է բայի անցողականությունն ու սեռը միավորել, որ մասամբ հաջողվում է։ Սակայն ձևական ելակետը նրան զցում է շփոթության մեջ։ Այսպես՝ հոգ ժառանգությունը նետվեց ջուրը, կարող էր նետվեց ջուրը նախադասությունների մեջ առաջին նետվեց ձևը, հեղինակի տեսության համեմատ, իրոք որ կրավորական է, իսկ երկրորդ նետվեց ձևը մի ինչ-որ այլ բան է։ Նա հասկանում է, որ սա անդրադարձ սեռի բայաձև է, բայց աշխատում է իր համար տհաճ այդ երևույթից ազատվել և չի կարողանում։ Բայց մեր լեզվի մեջ երկրորդ նետվեց ձևն այժմ խիստ տարածում է դուրս և նրանից հրաժարվելով՝ հարցը գիտականորեն չի լուծվում։

Բայի վերլուծության բաժնում կան ոչ քիչ թվով մասնակի այլ թերություններ։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

՝ I. E. KAPAGIANNOPOLLOS, Πηγαί τῆς Βυζαντινῆς Ἱστορίας, Β' ἔκδοσις, Θεσσαλονίκη, 1971, 555 σελ. (Ի. է. Կաբաջաննոպոլոս, Բյուզանդական պատմության աղբյուրները, II հրատ., Սալոնիկ, 1971, 555 էջ)։

Գրախոսվող ուսումնասիրությունը Սալոնիկի «Բյուզանդական հետազոտությունների կենտրոնի» (Κέντρον Βυζαντινῶν Ἑρευνῶν) «Բյուզանդական բնագրեր և ուսումնասիրություններ» (Βυζαντινὰ κείμενα καὶ μελέται) մատենաշարի երկրորդ գիրքն է։ Բյուզանդիայի պատմության մեր պարզվող մասնագետների համար գրքի ունեցած արժեքի և կարևորության մասին վկայում է այն փաստը, որ իր լույս տեսնելու հաջորդ տարին աչքն վերահայտարարվել է (գրքի առաջին հրատարակությունը լույս տեսավ նույն տեղում, 1970 թ.)։ Երկրորդ հրատարակությունը տարբերվում է առաջինից իր ընդգրկած նոր նյութով, որ տրված է գրքի վերջում որպես լրացում։

Բյուզանդիայի պատմության մեր պարզվող մասնագետը բյուզանդագիտության այլ ճյուղերի մասնագետի համեմատության մեջ գտնվում է ավելի լավ վիճակում այն պատճառով, որ նրա տրամադրության տակ կան մատենագիտական մի շարք արժեքավոր ձեռնարկներ։ Մինչև օրս էլ նրա սեղանի գիրքն է համարվում Կ. Կրումբախերի հայտնի «Geschichte der Byzantinische Literatur» (München, 1897, երկրորդ հրատարակություն)։ Հետազոտում լույս են տե-

սել այդ տիպի մի քանի գրքեր ևս, ինչպես օրինակ, հունգարացի բյուզանդագետ Դ. Մորավսիկի երկհատոր աշխատությունը (Gy. Moravcsik, Byzantinoturcica. Die byzantinischen Quellen der Geschichte der Türk-völker, Zweite durchgearbeitete Auflage Berlin, 1958. առաջին հրատարակությունը լույս է տեսել Բուդապեշտում 1942—1943 թթ.)։ Այն վերաբերում է թյուրքական ժողովուրդների մասին խոսող բյուզանդական հեղինակներին (ավելորդ չէ նշել, որ բյուզանդական հեղինակների մեծամասնությունը գրել է այդ ժողովուրդների մասին)։ Եվ, վերջապես, Մ. է. Կոլոննայի աշխատությունը «Gli storici bizantini dal IV al XV secolo. I Storici profani, Napoli, 1956», որը թեև հիմնված է Դ. Մորավսիկի գրքի վրա, բայց բովանդակում է բոլոր աշխարհիկ հեղինակներին՝ անկախ այն բանից, խոսում են նրանք թյուրքական ժողովուրդների մասին, թե ոչ։ Վերոհիշյալ բոլոր երկերը լիակատար կերպով մատենագիտական տեղեկություններ են տալիս հեղինակի և նրա գործի մասին, նրա երկի՝ առկա ձեռագրերի մասին, հիշում են գոյություն ունեցող հրատարակությունները, այն հրատարակությունը, որից